ԱՄԱՉԳԱՑԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՆՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ

Մեծ յօբելեաններն հայաքաղաք Լէքսանդրապոլը տօնեց արժանաւոր սրտաբուխ հանդիսաւորութեամբ։

Նախօրով դուժաբուած՝ կրթական-կուլտուրական հաստատութիւնների ներկայչական ընդհանուր ժողովը որոշեց տօնի կատարման ցանկալի ազգային-ժողովրդական բնոյթը և ձևի մշակման ու իրականացման համար ընտրեց Յօբելենական Յանձնախումբ, որի անդամներն էին՝ հ. Յակոբ քահ. Սաչվանքեան, (նախագահ) տ. Շ Եւանգուլեան, Պ. Բերբերեան, Յ. Տէր-Պօղոսեան, Ն Կիրակոսեան, Գեղամ Արմէն, Յ. Մոծակեան, Գ. Տաթեւեան, Յ. Միրզայեան և Ա. Շաթիրեան (քարտուղար)։

Յանձնաժողովի կազմած ծրագրով մեծ Յօբելեանների տօնակատարութիւնը շարունակուեց երկու օր, հոկտեմբերի 12—13-ը։

Շաբաթ Հոկտեմբերի 12-ին, սբ. Փրկիչ եկեղեցին հաւաքեցին քաղաքիս բոլոր 14 դպրոցների աշակերտ-աշակերտուհիները՝ դլուխ ունենալով մանկավարժական և հոգաբարձական կազմերը։

Եկեղեցիների զանգերը խփելուն պէս քաղաքի բոլոր կրպակները փակուեցան՝ կրպակապանների ինքնաբուխ ցանկութեամբ։

Յերեկուայ 10½ ժամին սկսուեց հանդիսաւոր պատարագը. երգում էր Արզուեան դպրոցի աշակերտուհիների երկձայն երգեցիկ խումբը։

Պատարագից յետոյ 12½ ժամին եղաւ հոգեհանգիստ դրի և տպագրութեան երախտաւորների յիշատակին։ Օրուայ նշանակութեան մասին երկար քարոզ խօսեց Առևտրական դպրոցի կրօնուսոյց Ներսէս ք. Նիկողոսեան։

1 ժամին աշակերտ-աշակերտուհիները խմբական կարգով դիմեցին քաղաքային ժողովրդական տուն, ուր եղաւ գրական-երաժշտական ցերեկոյթ աշակերտութեան համար։